ՀՈԳԵՎՈՐ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ՔԱՐՈԶԽՈՍՈՒԹՅՈՒՆԻՑ

«ՊԱՀՊԱՆԵՆՔ ՄԵՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ»

Անցած կիրակի՝ հուլիսի 9-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում, հավարտ կիրակնօրյա Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանն իր խոսքում մեկնաբանեց ավանդական հայկական ընտանիքի խորհուրդը, որտեղ տղամարդն ընտանիքի հայրն է, իսկ կինը՝ մայրը:

- Այսօր անցկացվում է թեմական կյանքում ավանդական դարձած «Տոլմայի փառատոնը»: Ինչու ենք մենք կերակրի հետ կապված այդ փառատոնն անցկացնում: Անշուշտ այն պատճառով, որպեսզի կարողանանք մեկ անգամ եւս հաղորդակցվել մեր ավանդույթներին, որպեսզի մեկ անգամ եւս տեսնենք, գիտենանք, թե ինչ կերակուրներ են պատրաստվել ու պատրաստվում մեր ավանդական հայկական ընտանիքներում, որպեսզի մեր երիտասարդները ինչ-որ ձեւով է՛լ ավելի մոտենան իրենց ավանդույթներին, որոնք շա՜տ-շատերն արդեն մոռանում են:

Երեկվանից սկսած մեր եկեղեցին, եւ ոչ միայն մեր եկեղեցին, այլեւ բոլոր Եկեղեցիները քարկոծվում են, թե մենք՝ որպես եկեղեցի, խրախուսում ենք ուժի կիրառումը ոչ ավանդական սեռական փոքրամասնությունների հանդեպ: Ով կարդացել է, ով լսել է, տեսել մեր հայտարարությունները, լավ գիտի, որ այնտեղ ուժի կիրառման հետ կապված ոչ մի խոսք չկա: Մենք ընդամենը պահանջել ենք այդ մարդկանցից, որ այն, ինչը նրանց համար համարվում է ճիշտ կյանք, չբերեն եւ չփաթաթեն մեր գլխին: Մենք մեր ավանդական ընտանիքներին ենք սովոր, սովոր ենք, որ մեր ընտանիքներում մայրը՝ կին է եւ հայրը՝ տղամարդ: Մենք սովոր ենք մեր մայրիկին անվանել մայր, մեր հայրիկին՝ հայր, այլ ոչ թե ծնող համար մեկ եւ ծնող համար երկու: Եվ սովոր ենք, որ մեր երեխաները մեծանան ու լսեն մեզ, լսեն իրենց ծնողներին, իրենց մեծերին եւ ոչ թե՝ ինչ-որ հասարակական կազմակերպությունների քարոզչությունը, որոնք ֆինանսավորվում են, Աստված գիտի, ինչ աղբյուրներից եւ, Աստված գիտի, ինչ մարդկանց կողմից: Մենք ընդամենը ուզում ենք, որ մեր ավանդական ընտանիքը պահպանվի, որպեսզի վաղը, մյուս օրը մեր երեխաները չգան ու չասեն, որ հայրիկ, մայրիկ, դուք սխալ էիք այսքան տարի, դուք ճիշտ չեք, որ ընտանիքը կարեւոր չէ, որ պսակը կարեւոր չէ եւ այլն, ես չեմ ուզում շատ ավելի խորանալ:

Մեր պահանջն ընդամենը դա է: Իսկ մեր հարգարժան որոշ հեռուստաընկերությունները, որոշ հասարակական կազմակերպություններն ամեն ինչ խորացրին եւ քարոզում են հայտարարելով, թե, իբր, եկեղեցին խրախուսում է այն ամենը, ինչ երեկ կատարվեց: Մեզանից ոչ մեկը չի ասել՝ թե գնացեք, իրար ծեծեք: Մենք ընդամենը ասել ենք մեր խոսքը, մենք դիմում ենք նաեւ Ձեզ՝այսօր, դիմել ենք մեր հավատացյալներին, որ դա չարիք է, դրանցից հեռու մնացեք: Դրանք մեր մոլորված եղբայրներն են, եւ մեզ մնում է միայն աղոթել նրանց համար, որպեսզի նրանք շուտ հասկանան իրենց սխալները եւ նորից վերադառնան իրենց ավանդական կյանքին:

Այս է մեր ուզածը, այս է մեր ասածը, իսկ ուժ կիրառողը եկեղեցու կողմից չէ: Եկեղեցու ուժը նրա խոսքն է, որը նա կարող է ուղղել իր հավատացյալներին:

Ահա այս է, ինչ ուզում էինք ձեզ ասել, հորդորել եւ կոչել, որպեսզի գնանք եւ օրհնենք մեր ավանդական ընտանիքներում պատրաստված տոլմայի սեղանը եւ բոլորս ճաշակենք այդ համեղ կերակրատեսակը:

ՀԱՄԱՅՆՔ

ՏՈԼՄԱ, ՏՈԼՄԱ... ՀԱՄՏԵՍՈՂՆԵՐԸ ՁԱՐՄԱՑԱԾ ԷԻՆ ՏՈԼՄԱՅԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Հուլիսի 9-ին «Տոլմայի փառատոն 2023-ն», ըստ ավանդույթի, անցկացվեց Վիրահայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցու բակում:

Սեղանների մոտ ազգային զարդանախշերով գոգնոցներով զուգված հայ տիկնայք հրավիրում էին ներկաներին՝ համտեսել իրենց պատրաստած տոլմաները: Իսկ դրանք տարբեր էին՝ խաղողի տերեւով, կաղամբով, խառը բանջարեղենով, սոխով, նաեւ պասուց, չամչով ու մեխակ-դարչինով, գազարով, պանրով եւ այլն՝ բոլորն էլ գեղեցիկ ձեւավորված ու ախորժալի:

Տոլմայի ավանդական փառատոնն անցկացվեց Վրաստանի հայ կանանց «Շուշանիկ» միության կազմակերպմամբ՝ Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եւ Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցիների խաչքավորների, երկու եկեղեցիների «Եկեղեցասեր կանանց» խմբերի, Վրաստանի հայ համայնք հասարակական կազմակերպության աջակցությամբ եւ «Անի» պարային համույթի մասնակցությամբ:

Փառատոնին ներկա էին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, Վրաստանի համայնքային կառույցների անդամներ, Վրաստանում Հայաստանի դեսպանության դիվանագետներ, Թբիլիսիի սակրեբուլոյի՝ ներկայացուցիչներ, հավատացյալներ, զբոսաշրջիկներ, հյուրեր:

ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - 150» ՀՈՒՇԱՄԵԴԱԼ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԻՆ

Հուլիսի 8-ին Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը հանդիպում ունեցավ Հայաստանի Հանրային հեռուստատեսության նախկին լրագրող, այժմ «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կենտրոնի լրատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Ռուզաննա Վարդերեսյանի հետ:

Բարձր գնահատելով ճանաչված լրագրողի կողմից Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի կայացման աշխատանքներում ունեցած ներդրումը, Թեմական առաջնորդի տնօրինությամբ, ծնունդով թբիլիսցի, Թբիլիսիի թիվ 104 հայկական հանրային դպրոցի շրջանավարտ Ռուզաննա Վարդերեսյանը պարգեւատրվեց Վիրահայոց թեմի «Հովհ.Թումանյան-150» հուշամեդալով:

Իր Հայրական օրհնության հետ Հայր Սուրբը ճանաչված լրագրող Ռուզաննա Վարդերեսյանին հանձնեց հուշամեդալը եւ մաղթեց նրան նորանոր հաջողություններ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հուլիսի 3-ին Վրաստանի խորհրդարանն արտահերթ նստաշրջանի նիստում երրորդ ընթերցմամբ ընդունել է «Առողջության պաշտպանության մասին» օրենքում փոփոխությունները, որոնց համաձայն ընդլայնվում են առողջապահության նախարարության լիազորությունները:

Ըստ օրենքի, առողջապահության նախարարությունն առանց նախնական ծանուցման կարող է ամեն պահ ստուգել եւ, անհրաժեշտության դեպքում, փակել նախարարության հսկողության տակ գտնվող ցանկացած մասնավոր կամ պետական բժշկական հաստատություն:

Օրինագծում փոփոխության նախաձեռնողն առողջապահության նախարարությունն է: Փոխնախարար Թամար Գաբունիայի պարզաբանմամբ, օրինագծի հիմնական նպատակը հիվանդի առողջության եւ անվտանգության ապահովումն ու արդյունավետ վերահսկողության մեխանիզմի ստեղծմամբ՝ բժշկական ծառայությունների որակի կտրուկ բարելավումն է:

ՈՒՌՈՒՑՔԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԿՖԻՆԱՆՍԱՎՈՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Նշված երեք կլինիկաներից, Իսպանիայի դեպքում, պրոտոնային թերապիայի հնարավորություն կլինի, որը նույնպես ամբողջությամբ կֆինանսավորվի: «Համերաշխության հիմնադրամը» իրականացնում է մանկական ուռուցքաբանության ծրագիրը: Առաջարկվող գները ներառում են երեխայի եւ մեկ ուղեկցողի կացություն: Մնացած ծախսերը հոգալու է «Համերաշխության հիմնադրամը»: Իսրայելական կլինիկան միակն է, որը հաշվի չի առնում ապրուստի ծախսերը,- ասաց Զուրաբ Ազարաշվիլին եւ հավելեց, որ արտասահմանում մինչեւ 18 տարեկան հիվանդների բուժման ծրագիրն անցումային փուլ կունենա, մինչեւ Վրաստանում ծառայությունները կուժեղացվեն, եւ կստեղծվի մանկական ուռուցքաբանության պետական կենտրոն՝ հագեցած ժամանակակից չափանիշներով ու բարձր տեխնոլոգիական սարքավորումներով, որտեղ կգործի բժշկական ծառայությունների ամբողջական շրջանակ:

- Այդ ուղղությամբ առողջապահության նախարարությունն ակտի աշխատում է,- հայտարարեց Զուրաբ Ազարաշվիլին:

ՅՈԹ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԼԻՆԻԿԱՆԵՐԻՆ ՏՐՎԵԼ Է 524 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻ

Վրաստանի օկուպացված տարածքներից հարկադիր վերաբնակների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարարության տարածած հայտարարության մեջ նշված է, որ ընթացիկ տարվա հունվարից առ այսօր պետությունը 524 մլն լարիով ֆինանսավորել է կլինիկաների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունները եւ, հաշվի առնելով համապատասխան կանոնակարգով սահմանված վճարման ժամկետները, այսօրվա տվյալներով նախարարության պարտքը կլինիկաներին չի նշվում:

«Վրաստանի կառավարության «Համընդհանուր առողջապահական խնամքին անցնելու նպատակով ձեռնարկվելիք որոշ միջոցառումների մասին» որոշման համաձայն, կլինիկայի կողմից կատարված աշխատանքի փոխհատուցման լրիվ ժամկետը սահմանվում է 73 աշխատանքային օր՝ այն ներկայացնելուց հետո:

Ըստ այդմ, բուժհաստատությունների կողմից տրամադրված հունվար-փետրվար ամիսների տվյալներն արդեն մշակվել են, եւ կլինիկաների կողմից կատարված ծախսերն ամբողջությամբ ծածկվել:

Կանխավճարի տեսքով տրվել է նաեւ մարտ ամսվա շտապ ստացիոնար ծառայությունների չափը»,- ասված է առողջապահության նախարարության հաղորդագրության մեջ:

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱՔԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏՈՒՆ ՓՐԿՈՒՄ Է ՄԵՆԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Վերջին մի քանի տարիների ընթացքում մենակ եմ մնացել: Բարեկամներս խորհուրդ են տալիս կատու պահել, ասում են, որ այն կարող է ազատել մենակությունից: Անկեղծ ասած, կասկածում եմ, չգիտեմ՝ փորձե՞մ, թե՞ ոչ:

Ա.ՀԱԿՈԲՅԱՆ
Թբիլիսի

Ընդհանրապես, ընտանի կենդանիները թույլ են տալիս մեղմել մենակության ծանրությունը, թեեւ այն չեն վերացնում: Պետք չէ կատվին կամ շանն ընկալել՝ որպես մենակության ցավի բուժման միջոց: Գերադասելի է, որ ինքներդ խորհեք ու պարզեք, թե ինչո՞ւ եք ձեզ զգում միայնակ, ի՞նչն է խանգարում հաստատել սերտ բարեկամական կամ սիրային հարաբերություններ: Եթե այդ հարցին կարողանաք պատասխանել, ապա կկարողանաք փոխել ձեր կյանքը, որոշել, թե որքանով է ձեզ համար անհրաժեշտ ընտանի կենդանի ունենալը:

Բոլոր դեպքերում, քանի դեռ ինքներդ համոզված չեք ձեր որոշման մեջ, կատու կամ ընտանի կենդանի պետք չէ տուն բերել: Պետք չէ կենդանուն՝ որպես խաղալիք կամ կենսական փորձերի օբյեկտ, ընկալել: Բայց եթե որոշեք, որ դա անհրաժեշտ է ձեզ, ապա սթափ մոտեցում ցուցաբերեք ընտրության հարցում՝ կատո՞ւ, թե՞ այլ կենդանի:

ԻՐԱՎԻՃԱԿ

ԴՈՒՍՏՐՍ ԽՐՎԵԼ Է ՊԱՐՏՔԵՐԻ ՄԵՋ, ՕԳՆՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ

Ամուսնուս հետ տարիներ շարունակ օգնում ենք մեր միակ դստերը: Նա 35 տարեկան է եւ ոչ մի կերպ չի կարողանում կարգավորել իր կյանքը: Ֆինանսական լուրջ հիմնախնդիրներ ունի՝ մշտապես պարտքերի մեջ է, վարկեր է փակում: Մեզ համար եւս դժվար է. որքա՞ն կարող ենք օգնել:

Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆ
Բաթումի

Հավանաբար, դուք ինքներդ եք ձեր երեխայի համար անօգնականության իրավիճակ ստեղծել: Ձեր դուստրը կկարողանար կարգավորել հիմնախնդիրները, եթե ձեզանից մշտական օգնություն չստանար: Դրանով դուք «արջի ծառայություն» եք մատուցում ձեր դստերը: Չէ՞ որ ժամանակի ընթացքում նա ստիպված կլինի միայնակ բախվել կենսական դժվարություններին, եւ հարց է, թե կկարողանա՞ առանց ձեր օգնության դրանք հաղթահարել:

Քանի ուշ չէ, հրաժարվեք այդ պրակտիկայից: Ձեր աղջկան բացատրեք, որ կենսական լուրջ իրավիճակի դեպքում միշտ կաջակցեք իրեն, սակայն առօրյա կյանքում ինքը մենակ պետք է լուծի իրեն հուզող բոլոր հարցերը: Բնականաբար, սկզբնական փուլում նրա համար կլինի դժվար, սակայն, աստիճանաբար կսովորի ու խելամտորեն կբաշխի իր ֆինանսները: Հավատացեք, դա կլինի լավագույն օգնությունը ձեր աղջկա համար:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

❑ Ծիծաղի մեկ րոպեն օրգանիզմի վրա իր ազդեցությամբ համարժեք է 45 րոպե հանգստին: Ծիծաղը դրական ազդեցություն ունի մարսողության վրա:

❑ Ոտքերն արձագանքում են օրգանիզմի հուզական վիճակին: Հոգեկան անհավասարակշռությունը մարմնական խնդիրներ է առաջացնում: Ճարպոտ ազդրերը բառացիորեն,հետեւանք են հին վիրավորանքների, երակների լայնացումը՝ անհաջող ընտանիքի եւ աշխատանքի արդյունք է: Երջանիկ մարդը, ով ուրախությամբ սլանում է աշխատանքի եւ հաճույքով է վերադառնում ընտանիք, ոտքերի հետ կապված խնդիրներ չի ունենում:

❑ Վեհերոտ ուսերը եւ կռացած գլուխն առաջացնում են գլխացավեր եւ ողնաշարի խնդիրներ: Պետք է շտկել այդ անառողջ սովորությունը:

❑ Հիշեք՝ երջանկությունը փողի մեջ չէ: Փողով կարելի է գնել մահճակալ ու անկողին, բայց՝ ոչ հանգիստ քուն: Փողով կգնեք ուտելիք, բայց ոչ ախորժակ, դեղեր, բայց ոչ առողջություն, ծառաներ, բայց ոչ ընկերներ, կանանց, բայց ոչ սեր, տուն, բայց ոչ օջախ, զվարճանքներ, բայց ոչ ուրախություն, ուսուցիչներ, բայց ոչ խելք:

Եվ այս թվարկումը կարելի է անվերջ շարունակել...

ԿԵՆՍԱԿԱՆ

ԳԻՏԵՔ, ՈՐ ՍԵՔՍԸ ԵՐԿԱՐԱՑՆՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Ընտանեկան հարաբերությունների վերաբերյալ «Վրաստանի» վերջին հրապարակումներն իրարամերժ արձագանքներ են առաջացրել թերթի ընթերցողների շրջանում: Էլեկտրոնային փոստով ստացվող որոշ նամակների հեղինակներ անընդունելի են համարում խմբագրության կողմից այդ «տաբու» դրված թեմային անդրադառնալը, մյուսները, ընդհակառակը, ողջունում են եւ խնդրում՝ առավել ընդլայնել թեման, շոշափել այնպիսի հարցեր, որոնք, սովորաբար, շրջանցվում են:

Խմբագրությունը, ընտրելով «ոսկե միջինը», կշարունակի ընտանեկան թեման, չնայած հնարավորինս կաշխատի իր հրապարակումներում լինել չափավոր ու հավասարակշռված:

ԱՆՀԱՎԱՆԱԿԱՆ Է, ԲԱՅՑ ՓԱՍՏ...

Գիտնականները նորանոր գերակայություններ են հայտնաբերում սեքսով պարբերաբար զբաղվելու հարցում: Եվ հատկանշական է, որ միանշանակ գտնում են, որ այդ գործընթացը երկարացնում է մարդու երիտասարդությունը:

Վերջին ժամանակներում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում 20-50 տարեկան տարիքի մարդկանց մոտ անցկացված հետազոտությունները ցույց են տվել, որ տարիքային բոլոր կատեգորիաներում վավերացվել է սեքսուալ ակտիվության նվազեցում: Օրինակ, երիտասարդ տղամարդկանց թիվը, ովքեր հայտարարել են իրենց կյանքում սեքսի բացակայության մասին, վերջին տասը տարվա ընթացքում ավելացել է 16 տոկոսով: Գիտնականները դրա բացատրությունը չեն կարողանում գտնել եւ դրանում մեղադրում են սոցիալական ցանցի գոյությունը: Դա բավական մտահոգիչ խնդիր է, քանի որ հրաժարվելով սեքսուալ ակտիվությունից, մենք կամավոր հրաժարվում ենք ծերացման դեմ ամենաէժան ու բնական «հաբից»:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ

Ցավոք, գիտությունը դեռեւս չի կարողանում պարզաբանել, թե ինչու է մարդկային օրգանիզմում գործարկվում հյուսվածքների ծերացման ծրագիրը: Դրա ամենատարածված տեսություններից մեկն առնչվում է մարմնաչափերի գործընթացի հետ: Հավանաբար, հիշում եք դպրոցի կենսաբանության դասերից, որ մեր ԴՆԿ-ն պահվում է քրոմոսոմներում, որոնք գտնվում են հյուսվածքի միջուկում: Մարմնաչափը քրոմոսոմի յուրատեսակ ծայրապնակն է, դրանց սովորաբար համեմատում են քուղերի պլաստմասսե ծայրապնակների հետ, որոնք թելերը պաշտպանում են քայքայումից: Մարմնաչափը իրականացնում է հենց այդ գործառույթը:

Օրգանիզմի առողջ վիճակի պահպանման կարեւորագույն պայմաններից մեկը հանգույցների բաժանումն է: Ընդ որում, ամեն անգամ, երբ հյուսվածքը բաժանվում է նոր հյուսվածքի ձեւավորման համար, մարմնաչափերը կարճանում են եւ, երբ դրանք չափից ավելի են կարճանում, հյուսվածքը չի բաժանվում եւ սկսվում է ծերացման գործընթացն ու հյուսվածքի վախճանը: Հետեւաբար, որքան երկար են մարմնաչափերը, այնքան ուշ է սկսվում ծերացման գործընթացը: Հավանաբար, սա հենց այն դեպքն է, երբ չափը վճռական նշանակություն ունի:

ԿԱ՞ՐՃ, ԹԵ՞ ԵՐԿԱՐ

Գիտնականները պարզել են, որ մարմնաչափերը կարճանում են, այսպես կոչված, «թթվայնացնող ցնցման» ազդեցության ներքո: Արդյունքում, ազատ ռադիկալների գործողության ներքո, հյուսվածքային համակարգը վնասվում է: Նշենք, որ ազատ ռադիկալների քանակն ավելանում է, երբ մարդը տառապում է քրոնիկ հիվանդություններով, ծխում է, սխալ է սնվում, չարաշահում ալկոհոլը եւ գտնվում է քրոնիկ ցնցումների ներքո: Հրաժարվելով սիգարետից, գինու ավելորդ բաժակից՝ դուք ձեր մարմնաչափերին օգնում եք դրանց ոչ դյուրին աշխատանքում:

Միաժամանակ, գիտնականները հայտնաբերել են նաեւ, որ մարմնաչափերը ոչ միայն կարող են կարճանալ, այլեւ երկարել: Շատ հաճախ այդ գործընթացի վրա ազդում են մարդկանց կենսաձեւերը. սպորտով զբաղվելը, ճիշտ սնվելը, հակոտնյա սովորություններից հրաժարվելը, շնչառական մարմնամարզությունը, յոգան: Վերջին ժամանակների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սեքսը նույնպես երկարացնում է մարմնաչափերի կյանքը: Գիտնականները պարզել են, որ կանանց մոտ, ովքեր պարբերաբար զբաղվում են սեքսով, մարմնաչափերն ավելի երկար են, քան նրանց մոտ, ովքեր ապրում են պակաս սեքսուալ կյանքով: Ճիշտ է, այս պնդումը դեռեւս ստուգման ու հաստատման կարիք ունի, բայց արդեն այսօր կարելի է եզրակացնել, որ ոչ միայն հոգու, այլեւ մարմնի երիտասարդացման համար անհրաժեշտ է զբաղվել սեքսով:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *- Այս շունը փրկել է իմ կյանքը:*

- Ինչպե՞ս է դա պատահել:

- Հիվանդ էի, պոլիկլինիկայից բժիշկ եկավ, բայց շունը չթողեց, որ նա տուն մտնի:

☺ *- Լսիր, ի՞նչ կանես, եթե քեզանից պարտքով փող վերցնեն ու չվերադարձնեն...*

- Կսպանեմ... Ներիր, ընդհատեցի, դու ինչ-որ բա՞ն էիր ցանկանում ասել...

- Չէ՛, ոչինչ, արդեն ոչինչ:

☺ *Զրուցում են երկու ընկերուհի:*

- Ամուսինս հիանալի անձնավորություն է եւ այնքա՜ն սեքսուալ...

- Եթե այդպիսին է, ապա ինչո՞ւ ես դավաճանում:

- Գիտես, որքան շատ եմ դավաճանում, այնքան շատ համոզվում եմ, որ նա ամենալավն է:

☺ *«Ինչպե՞ս է սկսվում քո առավոտը» թեմայով տղամարդկանց մրցույթում հաղթեց «Առավոտյան արթնանում եմ, նախաճաշում ու գնում եմ տուն» տողերի հեղինակը:*

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



☞ *Մեկ ակնթարթում հնարավոր է հերոս դառնալ, սակայն մի ամբողջ կյանք է պետք արժանավոր մարդ դառնալու համար:*

ՊՈԼ ԲՐՅՈՒԼԱ

☞ *Մեր կյանքում տեղի ունեցող փոփոխությունները մեր ընտրության եւ մեր որոշումների հետեւանքներն են:*

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԻՄԱՍՏՈՒԹՅՈՒՆ

☞ *Անկեղծ բարեկամությանը յուրահատուկ է՝ խորհուրդներ տալ եւ խորհուրդներ լսել:*

ՊԼԱՏՈՆ

☞ *Կյանքը նման է թատերական պիեսի. կարեւորը ոչ թե դրա տեւողությունն է, այլ այն, թե ինչպես ես այն խաղում:*

ՍԵՆԵԿԱ

☞ *Կինը իրավունք ունի անել՝ այն, ինչ ցանկանում է, միայն թե արածը համով լինի:*

Բ.Գ.

«Վրաստանի» ընթերցող
Մառնեուլի

ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ՝ ԲԱՐՁՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՏԵՄՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ

Հուլիսի 13-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ անցկացվեց կառավարության հերթական նիստ, որտեղ քննարկվեցին 2023 թվականի տնտեսական քաղաքականության հարցերը:

Ինչպես հայտարարեց Հայաստանի վարչապետը, Հայաստանն ունի լավ հնարավորություն առաջին հինգ ամսվա ցուցանիշներով 2023 թվականին նույնպես ապահովել բարձր տնտեսական աճ:

- Ունենք լավ հնարավորություն առաջիկա հինգ ամսվա ցուցանիշներով 2023 թվականին նույնպես ապահովել բարձր տնտեսական աճ:

Այս առումով, ուզում եմ ուշադրություն հրավիրել կապիտալ ծախսերի իրականացման մեր տեմպին ու որակին: Ծախսերի մասին խոսելիս՝ երբեք չպետք է մոռանալ որակի մասին, որովհետեւ ծախսն առանց որակի միջոցների վատնում է, դա պետք է բացառել,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՄՆ. ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

Հուլիսի 11-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց ունեցավ ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենի հետ:

Զրուցակիցներն անդրադարձան տարածաշրջանում հաստատված իրադրությանը, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի շուրջ ընթացող բանակցություններին, Լեռնային Ղարաբաղի հայության իրավունքների եւ անվտանգության ապահովման համար անհրաժեշտ քայլերին:

Իսկ մինչ այդ աշխատանքային այցով ԱՄՆ-ում գտնվող Հայաստանի անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպում ունեցավ ԱՄՆ պաշտպանության պետքարտուղարի փոխտեղակալ Լորա Կուպերի, ԱՄՆ Ազգային հետախուզության տնօրեն Ավրիլ Հեյնսի հետ:

Հանդիպումների ընթացքում կողմերը քննարկեցին պաշտպանության ոլորտում հայ-ամերիկյան կրթական ծրագրերի իրականացումը, Հայաստանի Զինված ուժերի բարեփոխումների գործընթացը, անդրադարձան պաշտպանության ոլորտում երկկողմ համագործակցության այլ հարցերին, մտքեր փոխանակեցին տարածաշրջանային անվտանգային իրավիճակի շուրջ, ինչպես նաեւ Հայաստան-ԱՄՆ երկկողմ համագործակցության վերաբերյալ:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԻ «ՄԱՐԳԱՐԱ» ԱՆՑԱԿԵՏԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սկսվել են Թուրքիայի հետ սահմանի «Մարգարա» մաքսակետի 1-ին փուլի շինարարական եւ մոնտաժային աշխատանքները:

Մաքսակետի կառուցման 1-ին փուլի շինարարական եւ մոնտաժային աշխատանքների իրականացման համար արդեն վճարվել է 140,4 մլն դրամ: Մաքսակետի կառուցման 2-րդ փուլի նախագծանախահաշվային փաստաթղթերը ենթարկվել են պարզեցված փորձաքննության եւ ստացել դրական եզրակացություն: Պայմանագրով սահմանված գումարի մնացած մասը՝ 110.2 մլն դրամը, փոխանցվելու է կապալառուին՝ առնվազն երեք մոդուլային տաղավարների երկաթբետոնե հիմքերի սալերի աշխատանքների իրականացման պայմանով:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Արտիկոն» բաժնետիրական ընկերությունը:

ԿԱՅԱՑԱՎ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ

Հուլիսի 12-ին Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանին կայացավ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահմանի սահմանազատման ու սահմանային անվտանգության հարցերով հանձնաժողովի եւ երկու երկրների միջեւ պետական սահմանի սահմանազատման պետական հանձնաժողովի չորրորդ հանդիպումը՝ Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի եւ Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւի նախագահությամբ:

Համաձայն Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների մակարդակով տարբեր ձեւաչափերով ձեռք բերված պայմանավորվածությունների, կողմերը շարունակել են սահմանազատման հարցերի քննարկումը, անդրադարձել կազմակերպչական եւ ընթացակարգային մի շարք հարցերի:

Կողմերը պայմանավորվել են նաեւ աշխատանքային կարգով որոշել հանձնաժողովների հաջորդ հանդիպման անցկացման օրն ու վայրը:



ՍՏԵՂԾՎԵԼ Է ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հուլիսի 12-ի որոշմամբ, ստեղծվել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, անվանի կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական հանձնաժողով եւ հաստատվել դրա անհատական կազմը:

Հոբելյանական հանձնաժողովի նախագահ է նշանակվել Հայաստանի վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը:

Հայաստանի վարչապետը հոբելյանական հանձնաժողովին հանձնարարել է քառամսյա ժամկետում մշակել հոբելյանական միջոցառումների ծրագիրը՝ ծախսերի նախահաշիվները համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հուլիսի 8-ին Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, Դուբրովնիկի համաժողովի շրջանակներում, հանդիպում ունեցավ Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ:

Հանդիպմանը Հայաստանի արտաքին գործերի նախարարն ու Եվրոպական միության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով Բարձր ներկայացուցիչը մտքեր փոխանակեցին Հայաստան-Եվրամիություն համագործակցության հարցերի շուրջ:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ ԵՆ ԿԱՐՄՐՈՒԿԻ ԴԵՊՔԵՐ

Հայաստանում կարմրուկի լաբորատոր հաստատված դեպքերի թիվը մեկ շաբաթում ավելացել է 20-ով եւ հասել՝ 299-ի:

Հայաստանի առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման ազգային կենտրոնի տվյալներով, վարակվածներից 8-ը հոսպիտալացված են, 169-ը դուրս են գրվել հիվանդանոցից:

Վարակվածներից 203-ը երեխաներ են, 96-ը՝ մեծահասակ:

«ՖԵՍՏԻՎԱՌ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ՝ ԵՐԵՔ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ

Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, Հանրային հեռուստաընկերությունը կազմակերպում է «ՖեստիՎառ» երաժշտական մեծ փառատոնը: Այն կանցկացվի Լոռու, Գեղարքունիքի եւ Սյունիքի մարզերում:

Փառատոնի բրենդավորման հիմքում Մարտիրոս Սարյանի «Հայաստան» կտավն է, որի ստեղծման 100-ամյակը լրանում է այս տարի:

«ՖեստիՎառ» փառատոնի շրջանակում մասնակիցները հնարավորություն կունենան Վանաձորում, Գավառում եւ Սիսիանում համտեսել տեղական արտադրանք, այցելել թաքնված ու հայտնի անկյունները եւ վայելել համերգային ծրագիրը: Փառատոնը կմեկնարկի հուլիսի 22-ին, Վանաձորում:

ԵՐԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵՑ ԽՈՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ

Հուլիսի 11-ին Երեւանում անցկացվեց լեգենդար ֆուտբոլիստ Խորեն Հովհաննիսյանի անվան մարզադպրոցի բացման արարողությունը:

Արարողությանը ներկա էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը, Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանը, մարզաշխարհի բազմաթիվ ներկայացուցիչներ:

Մինչեւ հանդիսությունը Նիկոլ Փաշինյանը շրջեց մարզադպրոցով, ծանոթացավ իրականացված աշխատանքներին ու երեխաների համար ստեղծված պայմաններին եւ շնորհավորեց մարզադպրոցի բացման առիթով:

- Կան մարդիկ, որոնք իրենք իրենց կամ իրենց ընտանիքին չեն պատկանում, այլ ավելի լայն շրջանակի: Պատկանում են երկրին, ժողովրդին: Խորեն Հովհաննիսյանն այդ անուններից մեկն է,- ասաց Նիկոլ Փաշինյանն ու հավելեց.- խորհրդանշական է, որ մարզադպրոցի բացմանը ներկա են մարդիկ, ում անվան մարզադպրոցների բացման ժամանակ կրկին հնարավորություն կլինի հավաքվել:

- Արթուր Ալեքսանյանի մարզադպրոցն է կառուցվում Գյումրիում, Արթուր Աբրահամի մարզադպրոցի կառուցման ընթացքն մեկնարկել է Երեւանում, Վիկ Դարչինյանի հետ աշխատանքային քննարկումների մեջ ենք: Քաղաքական որոշումը կա, մնում է ապահովել շարունակությունը: Սիմոն Մարտիրոսյանի դպրոցի կառուցման աշխատանքներն ավարտվում են, եւ նախնական պլանով բացումը պետք է տեղի ունենա օգոստոսին: Շատ կարեւոր որոշում ենք կայացրել՝ Ռոման եւ Մալխաս Ամոյանների մարզադպրոցը կառուցել Ալագյազ խոշորացված համայնքում:

Բայց ես ուզում եմ նաեւ ասել, որ այս գործընթացն առաջին հերթին գնահատանքն է մեր մեծանուն մարզիկների վաստակի եւ Հայաստանին բերած համբավի համար, մյուս կողմից, սա սպորտի մասսայականացման կարեւոր գործիք է,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

Մարզադպրոցի շինարարական աշխատանքներն սկսվել են 2022թ. գարնանը: Սա Երեւանի Կենտրոն համայնքում զրոյից կառուցված եւ լեգենդար ֆուտբոլիստի անունը կրող առաջին մարզադպրոցն է նորանկախ Հայաստանի պատմության մեջ:

Մարզադպրոցը նախատեսված է 250-300 երեխաների համար, որոնք հնարավորություն կունենան մարզվելու ամենօրյա ռեժիմով:

Մարզադպրոցը համապատասխանում է միջազգային բարձր չափանիշներին: Ունի արհեստական խոտածածկով բարձր որակի խաղադաշտ, ադմինիստրատիվ շենքը ներառում է ջեռուցման եւ օդափոխության համակարգ, լսարաններ, աշխատասենյակներ, հանդերձարաններ ու մարզասրահ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀՈՒԼԻՍ

16.07.2023 Վարդավառ: Պայծառակերպություն Տեառն մերոյ Յիսուս Քրիստոսի

Քրիստոսի Պայծառակերպությունը Հայ Առաքելական եկեղեցու հինգ տաղավար տոներից է, եւ Պետրոս, Հովհաննես ու Հակոբոս առաքյալների առջեւ Քրիստոսի այլակերպության հիշատակի օրը:

Հայ եկեղեցին Քրիստոսի Պայծառակերպությունը տոնում է Զատկից 98 օր հետո՝ հունիսի 28-ից մինչեւ օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Հայաստանյայց եկեղեցին այն կոչում է նաեւ Այլակերպության տոն կամ Վարդավառ: Վերջինս հին հայկական տոնի անվանումն ունի, որից պահպանվել է նաեւ միմյանց վրա ջուր ցողելու սովորույթը: Պայծառակերպության տոնին հաջորդող երկուշաբթի օրը Մեռելոց է:

22.07.2023 Սուրբ Թադեոս առաքյալի եւ Սուրբ Սանդուխտ կույսի հիշատակության օր

ԹԵԺ ԳԻԾ

ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն - **112***
*Պարեկային ոստիկանություն - **112***
*Հրշեջ-փրկարար ծառայություն - **112***
*Պահակային ոստիկանություն - **125***
*Գլխավոր տեսչություն - **126***
*Տեղեկատու բյուրո - **118 08***
*Քաղաքապետարանի թեժ գիծ - **272-22-22***
*Առողջապահության նախարարության թեժ գիծ - **15-05***
*Ժողովրդական պաշտպան - **299-58-98, 292-24-79***
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - **14-81***
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն - **114, 240-40-04***
*«Վարկեթիլահրի»-ի տեղեկատվական ծառայություն - **227-50-40***
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ - **16 700, (+995 32)** 5 000 777*
*Ջրամատակարարման թեժ գիծ - **293-11-11***
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - **(593) 50-42-52***
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - **231-03-41, 231-04-21***
*Երկաթուղային կայարան - **1331, 2199010***
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - **(599) 74-73-73***

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

«ՀԱՎԼԱԲԱՐԻ» ՄԵՏՐՈԿԱՅԱՐԱՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԿՓԱԿՎԻ

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, մայրաքաղաքի մետրոկայարանների վերանորոգման ծրագրի շրջանակներում, «Հավլաբարի» կայարանը ժամանակավորապես՝ երկու շաբաթով, կփակվի:

Նրա խոսքով, վերականգնման գործընթացում լրացուցիչ աշխատանքներ են ի հայտ եկել:

Քաղաքապետը ասել է նաեւ, որ մետրոկայարանի վերականգնման ծրագրի ավարտի ժամկետը հետաձգվելու է մինչեւ 2023 թվականի վերջ:

ՔՈՒՌ ԳԵՏԻՑ ԽՐԱՄՈՒԼՆ ՈՒ ԳԵՏԱՁԱՁԱՆԸ ՉԵՆ ԱՆՀԵՏԱՆԱ

Քուռ գետի վրա գործող էլեկտրակայանների տնօրեն «Ջորջիա գեներացիա» ընկերությունը Անդրկովկասյան ԳԷՍ-ի տարածքում գետում թողել է մանր ձկներ:

Ինչպես տեղեկացրին ընկերությունում, մանր ձկները գետում արդեն տարածվող վայրի ծածանի եւ խրամուլ տեսակի են:

Մանր ձկների ջուր լցնելը իրականացվել է Քուռ գետում ձկների տեսակների պահպանման 10-ամյա ծրագրով: Արհեստականորեն աճեցրած մանր ձկների ջուր լցնելը կիրականացվի երկու տարին մեկ անգամ:

«Ջորջիա գեներացիա» ընկերությունը հատուկ ստուգումներ է անցկացրել: Այդտեղ նշեցին հիդրոէլեկտրակայանների մոտ կտեղակայվեն ձկների պաշտպանության հատուկ սարքեր:

Հիշեցնենք, որ Քուռ գետը Հարավային Կովկասի ամենախոշոր գետն է, հոսում է Վրաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի տարածքով: Գետի վրա գործում են մի շարք հիդրոէլեկտրակայաններ, Վրաստանում՝ Անդրկովկասյան ՀԷԿ-ը եւ Օրթաճալա ՀԷԿ-ը:

ՍՊՈՐՏ

ՖՈՒՏԲՈԼ. ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ ԲԱԹՈՒՄԻԻ ՄԱՐԶԱԴԱՇՏՈՒՄ ՆՎԱՃԵՑ 21 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ՄԵԴԱԼՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, հունիսի 21-ին Թբիլիսիի, Բաթումիի եւ Քութայիսիի մարզադաշտերում մեկնարկեց մինչեւ 21 տարեկանների Եվրոպայի ֆուտբոլի առաջնությունը: Ցավոք, առաջնության քառորդ եզրափակչում Վրաստանի հավաքականը դուրս մնաց առաջնության մրցանակային տեղերի համար պայքարից:

Հուլիսի 8-ին «Բաթումի Արենա» խաղադաշտում անցկացվեց 21 տարեկանների մայրցամաքի առաջնության Անգլիայի եւ Իսպանիայի հավաքականների միջեւ եզրափակիչը: Դրամատիկ պայքարում անցկացված հանդիպումը նվազագույն՝ 1:0 հաշվով շահեցին անգլիացիները: Նշենք, որ Անգլիայի հավաքականն առաջնությանը մասնակից միակ թիմն էր, որը հաղթեց բոլոր վեց հանդիպումներում՝ սեփական դարպասը անառիկ պահելով:

ԸՄԲՇԱՄԱՐՏ. ԵՎՐՈՊԱՅԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԹԻՄԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆՆ Է, ՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ԵՐՐՈՐԴԸ

Հունգարական Կապոսլավ քաղաքում եզրագիծը հատեց ըմբշամարտի Եվրոպայի պատանեկան առաջնությունը:

Ընդհանուր առմամբ, ազատ եւ հունահռոմեական ոճի մրցաշարերում Վրաստանի հավաքականն իր ակտիվում գրանցած՝ երեք ոսկե եւ երկու արծաթե մեդալներով, թիմային հաշվարկում զբաղեցրեց առաջին տեղը:

Եվրոպայի պատանեկան մրցաշարում Հայաստանի թիմը՝ մեկ ոսկե, չորս արծաթե եւ հինգ բրոնզե մեդալներով, զբաղեցրեց թիմային առաջնության աղյուսակային երրորդ տեղը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1. Թուրքիայի մեջլիսի պատգամավոր, հայազգի քաղաքական գործիչ: 4.Գյումրիի՝ նախկինում: 10.Խոջիվանքում հանգչող մեծ վիպասան: 11.Սասունցի Դավթի հայրը՝ Փոքր ...: 12.«Անհաղթ հերոս քաջ Նազար, Որ մին ..., ջարդի հազար» (Հովհ.Թումանյան):13.Ու..., էնգ...: 15....տար, ...գիծ, ...փոս: 16.Երկաթուղային կայարան Հայաստանում: 17.«Երբ ... կողքին կա հոգատար ամուսին»: 19.«Կրակն է ընկել իր ... ձեռքը» (ժող.): 20.Լեռնանցք Արցախում: 21....լոր, ...ար, ...սոր: 23.Վագոնի մաս: 24.Հայ դերասան, երգիչ: 26.Կեղեքիչ, գջլող: 31.Բնակավայր Գեղարքունիքի մարզում, Սեւանի ափին: 34.Ընտանի թռչուն: 35.Տախտակի տեսակ: 37.Շինանյութ: 38.Երեք անգամ: 40.Հովհ.Թումանյանի ծննդավայր գյուղը: 42.Հայկական զովացուցիչ ըմպելիք: 44.Միավորված ազգերի կազմակերպություն: 45.Ավետիս, ... լուր: 46.Իտալական Միլան քաղաքի օպերան ... Սկալա: 47.Ասմունքի վարպետ Յուզբաշյանի անունը: 50.Օդի շարժումը: 52.Դերասանուհի, էստրադային երգչուհի ... Բաբայան: 53.Թբիլիսահայ նկարչուհի Գայանե Մանասյանի կեղծանունը: 55.Քաղաք Գերմանիայում: 56.Ի ... դնել, ... տալ: 57.Աչքով տեսնել ու լսել: 59.Աստվածաշնչյան կերպար: 60.Արի, անվախ: 61.Երաժշտական գործիք:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Թբիլիսահայ հայտնի կինոռեժիսոր: 2.Քաղաք Իսրայելում: 3.Նահանգ ԱՄՆ-ում: 5.Լիճ Արեւմտյան Հայաստանում: 6.«...ին պետք է հեռվից նայել» (Ա.Սահակյան): 7.Մաշտոցյան այբուբենի գինվոր: 8.Եկեղեցական համալիր Վրաստանում: 9.Ե'վ անուն, ե'ւ ծաղիկ: 13.Եկեղեցու սպասավոր, քահանա: 14.Երկրի արբանյակը: 17.Ոսկորների ամբողջությունը: 18.Ստորադասական շաղկապ: 21.«01-99» ֆիլմի սայլապանը: 22.Ալ.Շիրվանզադեի վեպերից: 23.Տխուր, ունքերը հավաքած: 25.Ծառի տեսակ: 27.ՀՀ վաստակավոր արտիստուհի Թուխմանյանի անունը: 28.Վառ կարմիր: 29.Երաժշտության տեսակ: 30.Արեգակնային համակարգի մոլորակ: 32.Ուտելիքը ծամող օրգան: 33.«... է նա, ով հայր է լինում» (Ավ.Իսահակյան): 36.Հույն կույր գրող Հոմերոսի ստեղծագործություններից: 39.Հայ մեծ նկարիչ: 41.Ավարայրի ճակատամարտի հերոս երեցը: 42.Վրաց թագուհի: 43.Քաջ, անվախ: 45.Հնձած հասկի խուրձ: 46.Խոսք, միտք: 48.Ռ.Պատկանյանի բանաստեղծություններից («Հիմի էլ ...»): 49.Թռչնի տեսակ: 50.Ամերիկահայ հայտնի կինոռեժիսոր ... Կարապետյան: 51.Գերմանացի հանճարեղ գրող Գյոթեի ստեղծագործություններից: 53.Ներքեւ ...: 54.... Ջերսի, ... Յորք: 58.Օժանդակ բայ: 59.Այո (բրբ.):

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 4.Աստանա: 8.Առարկել: 9.Ալբերտ: 10.Էնդեմիկ: 14.Դինամիտ: 15.Դիմա: 17.Արկած: 18.Թեմատիկ: 22.Սուրամի: 23.Աֆալին: 26.Գուցե: 27.Աբխազական: 32.Ալինա: 33.Աշոցք: 35.Կիեւ: 36.Հօդս: 39.Միմաս: 41.Ակինակ: 42.Սեգ: 44.Սեուլ: 45.Սին: 46.Լիրա: 47.Անանուն: 48.Կոն: 49.Խայթ: 50.Քոշ: 51.Ժանգ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Եռանդ: 2.Արսեն: 3.Հեքիմ: 5.Սոլթ: 6.Ապերիկ: 7.Աստված: 11.Դիթեր: 12.Մադամ: 13.Կիվի: 15.Դրվագ: 16.Մազից: 18.Թումբ: 19.Մահալ: 20.Տիրան: 21.Կաֆա: 24.Լուբոկ: 25.Ներքեւ: 28.Խանդ: 29.Ջիմ: 30.Կալինինո: 31.Նամակ: 34.Ցիցերոն: 37.Օդեսա: 38.Սալաթ: 39.Միսաք: 40.Մանուշ: 42.Սիկա: 43.Գանգ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍ ՄՈՒՏՔԱՐԱՆ: ԹԲԻԼԻՍԻ 0105, Գ.ԱՊՈՆԵԼԻՆ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աբոնելի փ. 5
ՏԵԼ. ՀԵՌ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445